ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ
ԱՄԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИ МАРЗ
ЭЧМИАДЗИНСКИ РЕГИОН
СЕЛЬСКАЯ ОБЩИНА АМБЕРД

N 01-10
«02» ՓԵՏՐՎԱՐԻ 2017 Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ,
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ, ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կից ներկայացնում ենք Ձեզ Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվար ամսվա ընթացքում ընդունած որոշումները:

Առդիր 8 թերթ:

Համայնքի ղեկավար Մ. Բաբայան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<11>> ՀՈՒՆՎԱՐԻ 2017թ. N 1-Ա

## *ԱՆՎՃԱՐ ԴԱՀԼԻՃՆԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 17-ի N22-Ն որոշմամբ, 2017 թվականի ապրիլի 2-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրություններին նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով.

*որոշում եմ՝*

1. Սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել անվճար դահլիճ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Մ. ԲԱԲԱՅԱՆ*

*2017 թվականի հունվարի 11,*
*Ամբերդ համայնք*

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ամբերդ համայնքի ղեկավարի
2017 թվականի հունվարի 11-ի
N 1-Ա որոշման

# Ց Ա Ն Կ

2017 թվականի ապրիլի 2-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնք

| Հ/հ | Դահլիճի, շինության անվանումը | Գտնվելու վայրը (հասցեն) | Նստատեղերի թիվը | Տրամադրելու օրերը և ժամերը | Դահլիճը, շինությունը տնօրինող | Այլ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ակումբ | Կոմիտասի 14 | 100 | Մարտի 5-ից 30-ը | Էդգար Ստեփանյան | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2-Ա

«09» ՀՈՒՆՎԱՐԻ 2017թ. Գ. ԱՄԲԵՐԴ

# ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ կետով, 76-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք համարելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի 2016 թվականի դեկտեմբերի 20-ի ավագանու թիվ 11 նիստի N 34-Ն.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողատեսքը, որի վրա առկա է արտադրական նշանակության շենք շինություն տալ վարձակալության մրցույթային եղանակով 99 (իննսունինը) տարի ժամկետով:
2. Կանխավճարը և քայլի չափը մեկնարկային տարեկան վարձավճարի 5 տոկոսին համարժեք դրամ, մասնակցության վճարը 5000 դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Մ. Բարսյան

2017 թվականի հունվարի 9

Գ. Ամբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3-Ա

«13» ՀՈՒՆՎԱՐԻ 2017Թ. Գ. ԱՄԲԵՐԴ

# ԱՄԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի երկրորդ մասով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի համայնքապետարանի աշխատակազմի 2017 թվականի հերթական արձակուրդի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Մ. Բաբայան

2017 թվականի հունվարի 13

Գ. Ամբերդ

ՀԱՎԱՆՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի

ԹԻՎ 3-Ա ՈՐՈՇՄԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԱՄԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ

| Հ/Հ | Անուն, ազգանուն | Պաշտոնը | Ամիսը |
|---|---|---|---|
| 1 | Բաբայան Մանվել | Համայնքապետ | Օգոստոս |
| 2 | Խուդոյան Օնիկ | Համայնքաբետի տեղակալ | Նոյեմբեր |
| 3 | Ստեփանյան Էդգար | <<Մշակույթ>> միացյալ տնօրինության տնօրեն | Հոկտեմբեր |
| 4 | Մարգսյան Սամվել | Աշխատակազմի քարտուղար | Հոկտեմբեր |
| 5 | Նավասարդյան Գայանե | Առաջատար մասնագետ | Օգոստոս |
| 6 | Ադամյան Անահիտ | Առաջատար մասնագետ | Հուլիս |
| 7 | Հարությունյան Լիդա | Առաջին կարգի մասնագետ | Մայիս |
| 8 | Գաբրիելյան Աշոտ | 2-րդ կարգի մասնագետ | Սեպտեմբեր |
| 9 | Ալեքսանյան Ավետիք | Վարորդ | Օգոստոս |
| 10 | Մարգարյան Ջեմմա | Հավաքարար | Մարտ |
| 11 | Վարդանյան Կարինե | դռնապահ | Սեպտեմբեր |

Աշխատակազմի քարտուղար Ս. Մարգսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4-Ա

«13 » ՀՈՒՆՎԱՐԻ 2017Թ. Գ. ԱՄԲԵՐԴ

## ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՂՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՅԱՆԵ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2017 թվականի հունվարի 24-ին Արմավիրի մարզի Ամբերդ համայնքում կայանալիք մրցույթ վաճառքի արձանագրողի լիազորությունները դնել գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Գայանե Նավասարդյանի վրա:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Մ. Բաբայան

2017 թվականի հունվարի 13

Գ. Ամբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 5-Ա

«23» ՀՈՒՆՎԱՐԻ 2017Թ. | Գ. ԱՄԲԵՐԴ

## ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով և հիմք համարելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքում գտնվող Ռուսիկ Երվանդի Պետրոսյանին պատկանող 04-008-0039-0005 կադաստրային ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողամասին, որի վրա առկա է կիսակառույց տուն, տալ Թիվ 1 փողոցի 10 հասցե համարանիշը:
2. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային անշարժ գույքի կադաստր պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Մ. Բաբայան

2017 թվականի հունվարի 23

գ. Ամբերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

## ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 6-Ա

«24» ՀՈՒՆՎԱՐԻ 2017Թ. Գ.ԱՄԲԵՐԴ

## ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 80-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Ամբերդ համայնքում կայացած հողի վարձակալության մրցույթի արդյունքները.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքում կայացած անշարժ գույքի՝ շենք-շինության իր հողամասով, 0.4091 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողահողատեսքի և նրա վրա առկա արտադրական նշանակության շենք-շինության վարձակալության մրցույթի հաղթող ճանաչել՝ Գևորգ Իշխանի Բաբայանին:
2. Մրցույթում հաղթող ճանաչված անձի հետ կնքել վարձակալության պայմանագիր 99 (իննսունինը) տարի ժամկետով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ամբերդ համայնքի ղեկավար Մ. Բաբայան

2017 թվականի հունվարի 24

Գ. Ամբերդ